

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ-Ի ԵՎ ԼՂՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ, ԶԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՄԻՋԵՎ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն, այսուհետ՝ «Ինստիտուտ»՝ մի կողմից, և ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարության «Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման կենտրոն» ՊՈԱԿ-ը, այսուհետ՝ «Կենտրոն»՝ մյուս կողմից, ստանդարտացման բնագավառում համագործակցությունը զարգացնելու, տնտեսական և առևտրական հարաբերությունների ապահովման, ստանդարտացման բնագավառում միասնական քաղաքականություն վարելու, ԼՂՀ-ում արտադրանքի արտահանմանը նպաստելու և արտաքին շուկաներում արտադրանքի մրցունակության բարձրացմանն աջակցելու նպատակով կնքեցին սույն համաձայնագիրը:

Հոդված 1

«Ինստիտուտը» հանձն է առնում ստանդարտացման բնագավառում «Կենտրոնի» համար կատարել հետևյալ աշխատանքները՝

-աջակցել միջազգային, եվրոպական, միջպետական և Հայաստանի Հանրապետության ստանդարտների ներդրումը ԼՂՀ-ում,

- աջակցել ԼՂՀ-ում ստանդարտների ֆոնդի ստեղծմանը և արդիականացմանը,

-կազմակերպել ԼՂՀ-ում մասնագետների ուսուցումը ստանդարտացման ոլորտում,

-կազմակերպել ԼՂՀ-ում կազմակերպությունների մասնակցությունը ՀՀ ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներում,

-տրամադրել ԼՂՀ կազմակերպություններին վաճառքի համար անհրաժեշտ ստանդարտները (էլեկտրոնային տարբերակները),

-տրամադրել խորհրդատվություն և տեղեկատվություն՝

ա) ազգային ֆոնդում առկա միջազգային (ԻՍՕ, ԻԷԿ), եվրոպական (ԵՆ), միջպետական (ԳՕՍՏ), Ռուսաստանի Դաշնության (ԳՕՍՏ Ռ) և այլ երկրների ստանդարտների մասին

բ) Ստանդարտացման միջազգային կազմակերպության և Ստանդարտացման եվրոպական կոմիտեի աշխատանքների մասին,

գ) ԱՊՀ երկրների ստանդարտացման, չափազիտության և սերտիֆիկացման միջպետական խորհրդի որոշումների մասին,

դ) ՀՀ ստանդարտացման ամենամյա ծրագրի մասին,

ե) ՀՀ ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների աշխատանքների մասին,

զ) ՀՀ տարածքում ընդունված և գործարկված նոր ազգային ստանդարտների մասին,

-ԼՂՀ մասնագետների համար կազմակերպել ուսուցում ստանդարտացման բնագավառում,

-ապահովել ԼՂՀ կազմակերպությունների մասնակցությունը ՀՀ ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին,

-պատշաճ և ամբողջությամբ կատարել ստանդարտացման բնագավառում տեղեկատվական սպասարկման աշխատանքները

-ժամանակին տեղեկացնել ՀՀ-ում ընդունված և գործարկված նոր ազգային ստանդարտների մասին,

-եռամսյակը մեկ նախապատրաստել և ներկայացնել հաշվետվություն կատարված աշխատանքների մասին

Հոդված 2

«Կենտրոնը» հանձն է առնում՝

-ԼՂՀ-ում ներդնել ՀՀ ազգային ստանդարտները,

-կազմակերպել ԼՂՀ կազմակերպությունների մասնակցությունը ՀՀ ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին,

-կազմակերպել ՀՀ ազգային ստանդարտների, միջազգային, եվրոպական, միջպետական և այլ պետությունների ստանդարտների տարածումը և վաճառքը ԼՂՀ-ում

-ԼՂՀ-ում ստեղծել ստանդարտների արդիականացված և գործող ֆոնդ,

-ապահովել ԼՂՀ մասնագետների ուսուցում և կազմակերպել սեմինարներ՝ ներգրավելով «Ինստիտուտի» մասնագետներին,

-եռամսյակը մեկ տրամադրել տեղեկատվություն ԼՂՀ-ում ստանդարտների կիրառման և վաճառքի վերաբերյալ,

-ԼՂՀ-ում վաճառված (իրացված) ստանդարտների գումարի 50%-ը վերադարձնել «Ինստիտուտին» որպես ոռոյալթի հեղինակային իրավունքի դիմաց՝ հաշվի առնելով, որ ձեռք բերած ստանդարտները հեղինակային իրավունքի առարկա են,

-առանց «Ինստիտուտի» համաձայնության երրորդ կողմին անվճար տրամադրելու նպատակով չպատճենահանել իրեն տրամադրված ստանդարտները և այլ փաստաթղթեր:

Հոդված 3

Կողմերը կապահովեն սույն Համաձայնագրի շրջանակներում կատարվող աշխատանքների վերաբերյալ ստացվող փաստաթղթերի և տեղեկատվության գաղտնիությունը, եթե Կողմերից մեկը նախազգուշացնում է այդպիսի գաղտնիության մասին: Այդ տեղեկատվությունը կարող է փոխանցվել երրորդ կողմին միայն տեղեկատվությունը տրամադրող Կողմի գրավոր թույլտվությամբ:

Հոդված 5

Սույն Համաձայնագրի մեկնաբանման և կատարման հետ կապված բոլոր վիճելի հարցերը լուծվելու են Կողմերի փոխադարձ խորհրդակցությունների և բանակցությունների ճանապարհով:

Հոդված 6

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ: Փոփոխությունները և լրացումները կձևակերպվեն սույն Համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող առանձին արձանագրություններով:

Հոդված 9

Սույն Համաձայնագրի իրականացման նպատակով իրագործվող աշխատանքների ֆինանսավորումը կատարվում է Կողմերի միջև պայմանավորվածության հիման վրա:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրը կնքվում է անժամկետ և ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ մյուս Կողմին գրավոր տեղեկացնելով իր մտադրության մասին:

Համաձայնագրի գործողությունը դադարում է այդ ծանուցումը մյուս կողմի ստանալուց 6 ամիս հետո:

